ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Սահմանադրական իրավունքի ամբիոն

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1905/B04 «Վարչական իրավունք»

Որակավորման աստիճան՝ բակալավրիատի կրթական ծրագիր

Կազմեցին՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Դանիելյանը
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ.Եղյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1905/B01. Վարչական իրավունք (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար, 24 ժամ գործնական, 84 ժամ ինքնուրույն աշխատանք)

4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

1.1. **Դասընթացի նպատակը**: «Վարչական իրավունք» դասընթացն անհրաժեշտ է՝ կիրառական լայն շրջանակներ ընդգրկող իրավունքի առաջատար ճյուղերից մեկի՝ վարչական իրավունքի վերաբերյալ ուսանողներին լիարժեք ու պահանջված խորությամբ գիտելիքներ տալու համար: Նկատի ունենալով, որ ուսանողները սահմանադրական իրավունքից, ինչպես նաև իրավունքի տեսությունից ու պատմությունից արդեն որոշակի պատկերացում ունեն վարչական իրավունքին առնչվող էական հարցադրումների վերաբերյալ, սույն դասընթացը հետապնդում է դրանք առավել հանգամանալից ու համարժեք ներկայացնելու, իրավունքի այդ ճյուղի առանձնահատկությունները և իրավունքի համակարգում վերջինիս ունեցած տեղն ընկալելի դարձնելու նպատակ:

Սույն դասընթացի նպատակն է նաև ձևավորել ուսանողների մոտ՝ վարչական օրենսդրության ակնհայտ մեծածավալ ու բազմաբնույթ ակտերի համակարգը հստակ պատկերացնելու, անհրաժեշտության դեպքում կոնկրետ հարաբերության կարգավորմանը նվիրված նորմատիվ իրավական ակտերի շրջանակը պարզելու ունակություններ: Միաժամանակ, հաշվի առնելով, որ վարչական իրավունքի լիարժեք դասավանդումն անխուսափելիորեն ուղեկցվում է վարչական օրենսդրության կիրառմամբ կոնկրետ վարչաիրավական ակտեր, իրավական այլ փաստաթղթեր (արձանագրություններ, ստուգման ակտեր, որոշումներ և այլն) կազմելու ունակություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ, «Վարչական իրավունք» դասընթացի նպատակներից է նաև ուսանողներին այդպիսի իրավական փաստաթղթեր կազմելու գործնական հմտություններով զինելը:

Նկատի ունենալով ներկայումս հայրենական իրավունքի համակարգի՝ վարչական իրավունքին սերտորեն առնչվող համեմատաբար երիտասարդ ինստիտուտների (վարչական արդարադատություն, վարչական պայմանագիր և այլն) նորամուծության հանգամանքը, անհրաժեշտ է դասընթացի առանձին հատվածներ հատկացնել դրանց լուսաբանմանը, հանգամանորեն ներկայացնելով վերջիններիս գիտագործնական նշանակությունը և կիրառական առանձնահատկությունները:

Սույն դասընթացի նպատակներից է նաև այն, որ ուսանողները հնարավորինս համարժեք պատկերացում ունենան գործադիր իշխանության ճյուղի այնպիսի առանցքային նշանակություն ունեցող բաղադրիչների մասին, ինչպիսիք են կառավարման ձևերն ու մեթոդները, վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտների կարգավիճակը, վարչական վարույթն ու վարչարարությունը, վարչական պատասխանատվությունը, պետական կառավարման ոլորտում կարգապահական պատասխանատվությունը, պետական կառավարման առանձին բնագավառներում վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները և այլն:

Դասընթացի առանձնահատկություններից է այն, որ հայրենական վարչական իրավունքը դեռևս որոշակիորեն տարբերվում է իրավունքի այդ ճյուղի առնչությամբ միջազգային փորձից, ինչպես նաև այն, որ վարչական իրավունքի էության, դրա առարկայի ու կարգավորման մեթոդի առնչությամբ միջազգային փորձը դեռևս չի առանձնանում միասնական տեսակետներով ու գործնականում իրավական լուծումներով, ուստի հարկ է համարվել առանձին հատված նվիրել արտասահմանյան երկրների վարչական իրավունքի ձևավորման ընդհանուր գծերով պատմաիրավական նախադրյալներին և հիմնական համակարգերին:

1.2. **Կրթական վերջնարդյունքները**: Դասընթացը հաջողությամբ ավարտելու և քննության արդյունքներով դրական գնահատական ստանալու դեպքում ուսանողն առնվազն, ըստ էության՝

ա) համարժեք պատկերացում կկազմի վարչական իրավունքի էության, հիմնարար ինստիտուտների ու եզրույթների, կարգավորման առարկայի և մեթոդների մասին,

բ) կիրազեկվի վարչական օրենսդրության համակարգի և առավել հիմնարար օրենսդրական ակտերի շրջանակի և դրանց բովանդակության մասին,

գ) ձեռք կբերի վարչական իրավունքի աղբյուրների հնարավորինս համարժեք ընկալման և դրանք համամասնորեն մեկնաբանելու ունակություն,

դ) իրազեկված կլինի պետական կառավարման բոլոր ոլորտների վարչաիրավական կարգավորման առանձնահատկություններին,

ե) կկարողանա գործնականում կիրառել վարչական իրավունքի նորմերը, մասնավորապես, կկարողանա կազմել վարչական իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերի և վարչական ակտերի նախագծեր, կազմակերպել և իրականացնել վարչական վարույթ և վարչարարություն, իրականացնել պետական կառավարման կոնկրետ ոլորտին առնչվող հանրային ծառայության իրավասությամբ թելադրված գործառույթներ:

1.3. **Ստուգման և գնահատման եղանակները**: Գիտելիքներն ստուգվում են ընթացիկ և եզրափակիչ քննություններով:

Նախատեսված են երկու *ընթացիկ քննություն* (առավելագույնը՝ 4-ական միավոր): Գնահատման չափանիշները. տրվում է 2 խնդիր, յուրաքանչյուրը 2-ական հարցով, (երկու միավոր), միավորների քայլը՝ յուրաքանչյուր հարցի համար 0,5 է:

*Եզրափակիչ քննությունը* բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր:

1-ին ընթացիկ քննությունը ներառում է թեմաներ 1-12-ը, 2-րդ ընթացիկ քննությունը՝ 13-25-ը:

## I I. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Դասընթացի բովանդակությունը

### Բաժին առաջին
### Հայաստանի Հանրապետության վարչական իրավունքի հասկացությունը և համակարգը: Վարչական իրավունքի գիտությունը

#### Թեմա 1.
#### Կառավարում, պետական կառավարում, գործադիր իշխանություն
#### (3 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Կառավարման հասկացությունը և բովանդակությունը: 2. Սոցիալական կառավարում: 3. Պետական կառավարում: 4. Գործադիր իշխանության հասկացությունը: 5. Գործադիր իշխանության և պետական կառավարման փոխհարաբերությունը:*

Հարցեր 1, 4, 5՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. - Երևանի պետ. համալս. - ԵՊՀ. հրատ., 2012, էջեր 12-16, 22-42):

Հարցեր 2, 3՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 16-27):

Հարցեր 1, 4-5՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1, 4-5՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

## Թեմա 2.
## Վարչական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը և սուբյեկտները
## (3 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Վարչական իրավունքի հասկացությունը և տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում: 2. Վարչական իրավունքի առարկան: 3. Վարչական իրավունքի մեթոդը: 4. Վարչական իրավունքի սուբյեկտները: 5. Վարչական իրավունքի գիտությունը:*

Հարցեր 1-4՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 42-69):

Հարց 5՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 69-81):

Հարցեր 1-4՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-4՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

## Թեմա 3.
## Վարչական իրավունքի նորմերը և աղբյուրները
## (2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

*1. Վարչաիրավական նորմերի հասկացությունը և բովանդակությունը: 2. Վարչաիրավական նորմի տեսակները: 3. Վարչական իրավունքի աղբյուրները: 4. Վարչական իրավունքի համակարգը:*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 82-97):

Հարց 4՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 96-102):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Թեմա 4.
Վարչաիրավական հարաբերություններ
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

*1. Վարչաիրավական հարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները: 2. Վարչաիրավական հարաբերությունների տեսակները: 3. Վարչաիրավական հարաբերությունների կառուցվածքը: 4. Իրավաբանական փաստերը վարչական իրավունքում:*

Հարցեր 1, 3-4՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 103-111, 119-125):

Հարց 2՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 112-119):

Հարցեր 1, 3-4՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Բաժին երկրորդ
Վարչական իրավունքի սուբյեկտները

Թեմա 5.
Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը
(3 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Ֆիզիկական անձանց վարչաիրավական կարգավիճակի հասկացությունը և բովանդակությունը: 2. ՀՀ քաղաքացիների հիմնական վարչաիրավական իրավունքներն ու պարտականությունները: 3. Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում: 4. ՀՀ քաղաքացիների իրավունքների վարչաիրավական երաշխիքները: 5. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը:*

Հարցեր 1-3, 5՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 126-152, 160-165):

Հարց 4՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 153-160):

Հարցեր 1-3, 5՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-3, 5՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա 6.
Հանրային վարչարարություն իրականացնող մարմինները
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Հանրային վարչարարություն իրականացնող մարմինների հասկացությունը և տեսակները: 2. Գործադիր իշխանության մարմինները, դրանց տեսակները և վարչաիրավական կարգավիճակը: 3. Հանրապետության Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության բնագավառում: 4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 5. Գործադիր իշխանության հանրապետական մարմինները: 6. Տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: 7. Հանրային վարչարարություն իրականացնող մյուս մարմինները:*

Հարցեր 1-3, 6-7՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 166-186, 210-229):

Հարցեր 4-5՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 118-201):

Հարցեր 1-3, 6-7՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-3, 6-7՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա 7.
Հանրային ծառայողներ
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Հանրային ծառայության հասկացությունը, կառուցվածքը և տեսակները: 2. Հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակը և դրա իրավական հիմքերը: 3. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները: 4. Հանրային ծառայության պաշտոնի հասկացությունը: 5. Պետական ծառայողներ հասկացությունը, տեսակները և համակարգը: 6. Հանրային ծառայության անցնելու կարգը, հանրային ծառայության ընթացքի վարչաիրավական կարգավորումը:*

Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 230-267):

Հարց 6՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 268-279):

Հարցեր 1-5՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-3՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա 8.
Կազմակերպությունների կարգավիճակը
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Կազմակերպությունների հասկացությունը և տեսակները: 2. Կազմակերպությունների պետական գրանցումը: Առանձին կազմակերպությունների գրանցման առանձնահատկությունները: 3. Տնտեսական կազմակերպությունների գործունեության առանձին տեսակների լիցենզավորման վարչաիրավական կարգավորումը:*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 280-295):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-2՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա 9.
Հասարակական միավորումների և կուսակցությունների վարչաիրավական կարգավիճակը
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Հասարակական միավորումների վարչաիրավական կարգավիճակը: 2. Կուսակցությունների վարչաիրավական կարգավիճակը: 3. Կրոնական կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 296-314):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-2՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Բաժին երրորդ
Պետական կառավարման ձևերն ու մեթոդները: Հատուկ վարչաիրավական ռեժիմները

Թեմա 10.
Պետական կառավարման ձևերը
(1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

*1. Պետական կառավարման ձևի հասկացությունը: 2. Պետական կառավարման ձևերի տեսակները:*

Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված

ուսումնական ձեռնարկը, էջեր 315-323):

Հարցեր 1-2՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Թեմա 11.
Պետական կառավարման մեթոդները
(1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

*1. Պետական կառավարման մեթոդի հասկացությունը: 2. Պետական կառավարման մեթոդների տեսակները: 3. Վարչական հարկադրանքի էությունը, հիմքերը և տեսակները*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 324-341):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Թեմա 12.
Հատուկ վարչաիրավական ռեժիմները
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Հատուկ վարչաիրավական ռեժիմների հասկացությունը, իրավական հիմքերը և տեսակները: 2. Արտակարգ դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները: 3. Ռազմական դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները:*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 342-359):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-3՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Բաժին չորրորդ
Վարչական վարույթ և վարչարարություն

Թեմա 13.
Վարչական վարույթի և վարչարարության հասկացությունը, վարչարարության հիմնարար սկզբունքները
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Վարչական վարույթի հասկացությունը և կիրառման շրջանակները: 2. Վարչարարության հասկացությունը և փոխհարաբերությունը վարչական վարույթի հետ: 3. Վարչական վարույթի և վարչարարության հիմնարար սկզբունքները: 4. Գործերի ենթակայությունը, վարչական մարմինների փոխօգնությունը:*

Հարցեր 1, 3-4՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 360-363, 366-381):

Հարց 2՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 364-366):

Հարցեր 1, 3-4՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-4՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

### Թեմա 14.
### Վարչական վարույթի իրավական հիմքերը
### (2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

*1. Վարչական վարույթի և վարչարարության սահմանադրական հիմնադրույթները: 2. Վարչական վարույթի և վարչարարության օրենսդրական հիմքերը:*

Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 382-389):

Հարցեր 1-2՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

### Թեմա 15.
### Վարչական վարույթի համակարգը
### (2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Վարչական վարույթի փուլերը: 2. Վարչական վարույթի մասնակիցները և այլ անձինք, ներկայացուցչությունը վարչական վարույթում: 3. Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու անհնարինությունը, բացարկ և ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը: 4. Վարչական վարույթի լեզուն: 5. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը, վարչական վարույթում արձանագրություն կազմելը:*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 390-408):

Հարցեր 4-5՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 409-414):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1, 4-5՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

### Թեմա 16.
### Վարչական ակտը, դրա տեսակները և ձևերը: Բողոքարկման վարույթը
### (4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Վարչական ակտի հասկացությունը և տեսակները: 2. Վարչական ակտի ձևերը: 3. Գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները, վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորումը: 4. Վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտն ուժի մեջ մտնելը: 5. Առ ոչինչ վարչական ակտը, վարչական ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները: 6. Բողոքարկման վարույթը: 7. Վարչական ակտի հարկադիր կատարումը և դրամական պահանջները կատարելը:*

Հարցեր 1, 3-7՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 415-416, 418-441):

Հարց 2՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 417-418):

Հարցեր 1, 3-7՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-3՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

### Թեմա 17.
### Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար
### (1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը, պատասխանատվության հիմքերը և կարգը: 2. Վնասի հատուցման եղանակները և չափերը:*

Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 442-454):

Հարցեր 1-2՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-2՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա18.
Վարչական պատասխանատվություն
(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Վարչական պատասխանատվության հասկացությունը և իրավական հատկանիշները: 2. Վարչական պատասխանատվության սկզբունքները: 3. Վարչական իրավախախտում (զանցանք): 4. Վարչական տույժի հասկացությունը, տեսակները և նշանակման կանոնները:*

Հարցեր 1-4՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 455-484):

Հարցեր 1-4՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1, 4՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա 19.
Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթը
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 1 ժամ սեմինար)

*1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի հասկացությունը և իրավական հիմքերը: 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի մասնակիցները: 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը, որոշում ընդունելը, այն բողոքարկելը և կատարելը:*

Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 485-509):

Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում են ներկայացված գործնական խնդիրները:

Հարցեր 1-3՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Թեմա 20.
Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթը
(1 ժամ դասախոսություն)

*1. Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի առանձնահատկությունները և իրավական հիմքերը: 2. Կարգապահական խախտում (զանցանք): 3. Կարգապահական տույժի հասկացությունը և տեսակները:*

Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված

ուսումնական ձեռնարկը, էջեր 510-517):

Հարց 3՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 518-520):

## Բաժին հինգերորդ
## Պետական կառավարման առանձին ոլորտների վարչաիրավական կարգավորումը

### Թեմա 21.
### Տնտեսության և ֆինանսների պետական կառավարումը
### (2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

*1. Տնտեսության պետական կառավարումը: 2. Ֆինանսների պետական կառավարումը: 3. Գյուղատնտեսության պետական կառավարումը: 4. Տրանսպորտի և կապի պետական կառավարումը: 5. Քաղաքաշինության պետական կառավարումը: 6. Պետական գույքի կառավարումը:*

Հարցեր 1-4՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 521-538):

Հարցեր 5-6՝ ինքնուրույն աշխատանք. ուսումնասիրվում են ուսանողի կողմից ինքնուրույն (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 538-566):

Հարցեր 1-6՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

### Թեմա 22.
### Սոցիալ-մշակութային ոլորտի պետական կառավարումը
### (1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

*1. Բնապահպանության պետական կառավարումը: 2. Կրթության և գիտության ոլորտների պետական կառավարումը: 3. Մշակույթի պետական կառավարումը: 4. Սպորտի և երիտասարդության պետական կառավարումը: 5. Սոցիալական ապահովության պետական կառավարումը: 6. Առողջապահության պետական կառավարումը:*

Հարցեր 1-6՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 567-591):

Հարցեր 1-5՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

### Թեմա 23.
### Վարչաքաղաքական ոլորտի պետական կառավարումը
### (1 ժամ դասախոսություն)

*1. Պաշտպանության պետական կառավարումը: 2. Ազգային անվտանգության պետական կառավարումը: 3. Ոստիկանության պետական կառավարումը: 4.*

*Արդարադատության պետական կառավարումը: 5. Արտաքին գործերի պետական կառավարումը: Սփյուռքի գործերով պետական կառավարումը:*

Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 592-632):

Թեմա 24.
Միջճյուղային պետական կառավարումը
(1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական, 2 ժամ սեմինար)

*1. Հանրային ծառայությունների պետական կառավարումը: 2. Տնտեսական մրցակցության պետական կառավարումը: 3. Անշարժ գույքի կադաստրի պետական կառավարումը: 4. Ազգային վիճակագրության պետական կառավարումը: 5. Պետական եկամուտների կառավարումը: 6. Տարածքային պետական կառավարումը:*

Հարցեր 1-6՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 633-663):

Հարցեր 1-6՝ գործնական պարապմունք: Թեմային առնչվող իրավական ակտերի նախագծերի կազմում:

Հարցեր 1-6՝ սեմինար: Ուսանողներն առաջադրված հարցերի առնչությամբ ներկայացնում են իրենց պատասխանները:

Բաժին վեցերորդ
Վարչական իրավունքն արտասահմանյան երկրներում

Թեմա 25.
Արտասահմանյան երկրների վարչական իրավունքի ձևավորման պատմաիրավական նախադրյալները և հիմնական համակարգերը
(2 ժամ դասախոսություն)

*1. Վարչական իրավունքի ծագման ու ձևավորման պատմաիրավական նախադրյալները: 2. Արտասահմանյան երկրների վարչական իրավունքի հիմնական համակարգերը:*

Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ նշված ուսումնական ձեռնարկը, էջեր 664-702):

Դասընթացի կազմակերպման ձևերը, դասավանդման մեթոդաբանությունը:

Դասընթացը հիմնականում կազմակերպվում է դասախոսությունների, սեմինարների և գործնական պարապմունքների եղանակով: Բացի այս հիմնական եղանակներից, դասընթացի 4-րդ և 5-րդ բաժինները դասավանդվում են նաև այլ լրացուցիչ նյութերի ու եղանակների (սլայդներ, սխեմաներ, տեսաֆիլմեր, դիդակտիկ նյութեր և այլն) օգտագործմամբ: Դասընթացի 5-րդ բաժնի շրջանակներում կազմակերպել հանդիպում

հանրային ծառայության մեջ ընդգրկված պաշտոնյաների հետ և կազմակերպել գործնական խնդիրների խմբակային քննարկում՝ դասավանդման պահին արդիականություն ձեռք բերած գործնական խնդիրների կտրվածքով:

Դասընթացի 1-3-րդ բաժինների առավել բարդ տեսական հարցադրումների (կառավարում, պետական կառավարում, գործադիր իշխանություն, հանրային վարչարարություն, պետական կառավարման ձևեր ու մեթոդներ) առնչությամբ կազմակերպվում են խմբային քննարկումներ:

## III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Նորմատիվ ակտեր


Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին կայացած հանրաքվեով, 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններով),

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (1950թ. նոյեմբերի 4),

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր՝ կից կամընտիր արձանագրությամբ (1966թ. դեկտեմբերի 16),

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966թ. դեկտեմբերի 16),

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա (1989թ. նոյեմբերի 20),

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին),

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (ընդունվել է 2000թ. հուլիսի 6-ին),

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002թ. հունիսի 4-ին),

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք (ընդունվել է 2005թ. մայիսի 2-ին),

Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրք (ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին),

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք (ընդունվել է 2002թ. փետրվարի 21-ին),

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին),

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1993թ. ապրիլի 17-ին),

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1995թ. նոյեմբերի 6-ին),

«Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. մայիսի 29-ին),

«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 7-ին),

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 3-ին),

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին),

«Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. փետրվարի 3-ին),

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին),

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին),

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. սեպտեմբերի 16-ին),

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. նոյեմբերի 11-ին),

«Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. մարտի 3-ին),

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. ապրիլի 14-ին),

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին),

«Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. հոկտեմբերի 12-ին),

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1999թ. նոյեմբերի 24-ին),

«Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. ապրիլի 4-ին),

«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. հուլիսի 06-ին),

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. նոյեմբերի 6-ին),

«Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2000թ. դեկտեմբերի 25-ին),

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. մարտի 7-ին),

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ մայիսի 30-ին),

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ.հունիսի 26-ին),

«Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. սեպտեմբերի 26-ին),

«Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 24-ին),

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 23-ին),

«Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. նոյեմբերի 20-ին),

«Սահմանապահ զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. նոյեմբերի 20-ին),

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին),

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին),

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հնարապետության օրենք (ընդունվել է 2002թ. ապրիլի 3-ին),
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին),
«ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. մայիսի 17-ին),
«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
«Զինվորական ծառայության անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
«Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին),
«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. հոկտեմբերի 8-ին),
«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 11-ին),
«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. ապրիլի 11-ին),
«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին),
«Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 13-ին),
«Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին),
«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին),
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին),
«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին),
«Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. հունիսի 11-ին),
«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին),
«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին),
«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին),
«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին),
«Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 15-ին),
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. հուլիսի 1-ին),
«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. նոյեմբերի 27-ին),

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 5-ին),

«Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին),

«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին),

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին),

«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին),

«Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2007թ. ապրիլի 12-ին),

«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2008թ. հունիսի 17-ին),

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 18-ին),

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 26-ին),

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2009թ. ապրիլի 4-ին),

«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2009թ. հոկտեմբերի 7-ին),

«Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին),

«ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին),

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին),

Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագիրը,

Հանրապետության Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագիրը,

## Մասնագիտական գրականություն

Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. - Երևանի պետ. համալս. - ԵՊՀ. հրատ., 2012, 704 էջ,

Դանիելյան Գ.Բ., Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները, Երևան, «ԱՌ-Տ», 2004, 328 էջ,

Դանիելյան Գ.Բ., Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում (դասագիրք), «ԱՌ-Տ», հրատարակչություն, Երևան, 2007, 246 էջ,

Դանիելյան Գ.Բ., Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ / Եր.: Տիգրան Մեծ, 2011. - 384 էջ,

Դանիելյան Գ.Բ., Բարեփոխումներ վարչական օրենսդրությունում, հայեցակարգային խնդիրներ, Օրինականություն, 1999թ., թիվ 8, էջեր 2-6,

Դանիելյան Գ.Բ., Կազմակերպությունների վարչական պատասխանատվության էությունը, Պետություն և իրավունք, Երևան, 1999թ., թիվ 2(5), էջեր 36-44,

Դանիելյան Գ.Բ., Եղյան Ռ.Հ., Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ գիտագործնական մեկնաբանություններ, Երևան - 2001, 103 էջ,

Եղյան Ռ.Հ., Վարչական իրավունքը ՀՀ իրավական համակարգում (դասախոսությունների կուրս), Երևանի պետական համալսարան, Երևան - 2006, 159 էջ,

Եղյան Ռ.Հ., Կազմակերպությունների վարչական պատասխանատվությունը, իրավագիտության հարցեր, Երևան, 1999թ., թիվ 1, էջեր 31-36,

Եղյան Ռ.Հ., Վարչական տույժեր (դասախոսություն), Երևանի պետական համալսարան, Երևան - 1999, 48 էջ,

Եղյան Ռ.Հ., Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման և զարգացման հեռանկարները, Իրավագիտության հարցեր, թիվ 1-2, էջեր 6-18,

Եղյան Ռ.Հ., Քաղաքացիական (պետական) ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում (ուսումնական ձեռնարկ), Եր., 2004, 176 էջ,

Даниелян Г.Б., Международно-правовые предпосылки становления института административного правосудия в странах постсоветского пространства. Белорусский журнал международного права и международных отношений, Минск, 2004, Выпуск 2004-1, էջեր 22-26,

Административное право: учебник / Ю.А. Дмитриев, И.А. Полянский, Е.В. Трофимов. – М.: Эксмо, 2009. 928 էջ,

Алехин А.П., Кармолицкий А.А., Административное право Российской Федерации: Учебник. – М.: Издательство "Юридическая литература", 2011. 712 էջ,

Попов Л.Л., Мигачев Ю.И., Тихомиров С.В. Административное право России: учебник. - 2-е изд., перераб. и доп. (отв. ред. Попов Л.Л.). - "Проспект", 2010. 689 էջ,

Сорокин В.Д., Административно-процессуальное право: учебник, 2-е изд., перераб. и доп. / Подгот. докт. юрид. наук., проф. А.И. Каплуновым. – СПб.: Издательство Р.Асланова "Юридический центр Пресс", 2008. 571 էջ:

## *Հարցաշար*
## *«Վարչական իրավունք» դասընթացի*

1. Կառավարման հասկացությունը և բովանդակությունը:
2. Սոցիալական կառավարման հասկացությունը և էությունը:
3. Պետական կառավարման հասկացությունն ու էությունը:
4. Գործադիր իշխանության հասկացությունը:
5. Գործադիր իշխանության և պետական կառավարման փոխհարաբերությունը:
6. Վարչական իրավունքի հասկացությունը:
7. Վարչական իրավունքի տեղը ՀՀ իրավունքի համակարգում:
8. Վարչական իրավունքի առարկան:
9. Վարչական իրավունքի մեթոդը:
10. Վարչական իրավունքի սուբյեկտները:
11. Վարչական իրավունքի գիտությունը:
12. Վարչաիրավական նորմի հասկացությունը:
13. Վարչաիրավական նորմի բովանդակությունը:

14. Վարքաիրավական նորմի տեսակները:
15. Վարչական իրավունքի աղբյուրները:
16. Վարչական իրավունքի համակարգը:
17. Վարչաիրավական հարաբերությունների հասկացությունը:
18. Վարչաիրավական հարաբերությունների առանձնահատկությունները:
19. Վարչաիրավական հարաբերությունների տեսակները:
20. Վարչաիրավական հարաբերությունների կառուցվածքը:
21. Իրավաբանական փաստերը վարչական իրավունքում:
22. Ֆիզիկական անձանց վարչաիրավական կարգավիճակի հասկացությունը և բովանդակությունը:
23. ՀՀ քաղաքացիների հիմնական վարչաիրավական իրավունքներն ու պարտականությունները:
24. Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:
25. ՀՀ քաղաքացիների իրավունքների վարչաիրավական երաշխիքները:
26. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը:
27. Հանրային վարչարարություն իրականացնող մարմինների հասկացությունը:
28. Հանրային վարչարարություն իրականացնող մարմինների տեսակները:
29. Գործադիր իշխանության մարմինները, դրանց տեսակները և վարչաիրավական կարգավիճակը:
30. ՀՀ Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության ոլորտում:
31. ՀՀ կառավարությունը, որպես հանրային իշխանություն իրականացնող մարմին:
32. Գործադիր իշխանության հանրապետական մարմինները, որպես հանրային իշխանություն իրականաղնող մարմիններ:
33. Տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որպես հանրային իշխանություն իրականացնող մարմիններ:
34. Հանրային վարչարարություն իրականացնող մյուս մարմինները:
35. Հանրային ծառայության հասկացությունը և կառուցվածքը:
36. Հանրային ծառայության տեսակները:
37. Հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակը:
38. Հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակի իրավական հիմքերը:
39. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները:
40. Հանրային ծառայության պաշտոնի հասկացությունը:
41. Պետական ծառայողներ. հասկացությունը, տեսակները և համակարգը:
42. Հանրային ծառայության անցնելու կարգը, հանրային ծառայության ընթացքի վարչաիրավական կարգավորումը:
43. Կազմակերպությունների հասկացությունը և դրանց վարչաիրավական կարգավիճակը:
44. Կազմակերպությունների պետական գրանցումը: Առանձին կազմակերպությունների գրանցման առանձնահատկությունները:
45. Տնտեսական գործունեության առանձին տեսակների լիցենզավորման վարչաիրավական կարգավորումը:
46. Կուսակցությունների վարչաիրավական կարգավիճակը:
47. Հասարակական միավորումների վարչաիրավական կարգավիճակը:
48. Կուսակցությունների և հասարակական միավորումների գրանցման վարչաիրավական կարգավորումը:
49. Կրոնական կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակի առաձնահատկությունները:

50. Պետական կառվարման ձևի հասկացությունը:
51. Պետական կառավարման ձևի տեսակները:
52. Պետական կառավարման մեթոդի հասկացությունը:
53. Պետական կառավարման մեթոդի տեսակները:
54. Վարչական հարկադրանքի էությունը և հիմքերը:
55. Վարչական հարկադրանքի տեսակները:
56. Հատուկ վարչաիրավական ռեժիմների հասկացությունը, տեսակները և իրավական հիմքերը:
57. Արտակարգ դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները:
58. Ռազմական դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները:
59. Վարչական վարույթի հասկացությունը և կիրառման շրջանակները:
60. Վարչարարության հասկացությունը և փոխհարաբերությունը վարչական վարույթի հետ:
61. Վարչական վարույթի և վարչարարության հիմնարար սկզբունքները:
62. Գործերի ենթակայությունը վարչական վարույթում:
63. Վարչական մարմինների փոխօգնությունը:
64. Վարչական վարույթի և վարչարարության սահմանադրական հիմնադրույթները:
65. Վարչական վարույթի և վարչարարության օրենսդրական հիմքերը:
66. Վարչական վարույթի փուլերը:
67. Վարչական վարույթի մասնակիցները և այլ անձինք:
68. Ներկայացուցչությունը վարչական վարույթում:
69. Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու անհնարինությունը, բացարկ և ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը:
70. Վարչական վարույթի իրականացման լեզուն:
71. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը, վարչական վարույթում արձանագրություն կազմելը:
72. Վարչական ակտի հասկացությունը:
73. Վարչական ակտի տեսակները:
74. Վարչական ակտի ձևերը:
75. Գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները:
76. Վարչական ակտի իրավական որոշակիությունը և հիմնավորումը:
77. Վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտի ուժի մեջ մտնելը:
78. Առ ոչինչ վարչական ակտը, վարչական ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը:
79. Վարչական ակտն առ ոչինչ, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու կարգը և հետևանքները:
80. Բողոքարկման վարույթը:
81. Վարչական ակտի հարկադիր կատարումը և դրամական պահանջները կատարելը:
82. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը, պատասխանատվության հիմքերը:
83. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության կարգը և վնասը հատուցելը:
84. Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակները և չափերը:
85. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հատուկ կանոնները:

86. Վարչական պատասխանատվության հասկացությունը և իրավական հատկանիշները:
87. Վարչական պատասխանատվության սկզբունքները:
88. Վարչական իրավախախտում (զանցանք):
89. Վարչական տույժի հասկացությունը, տեսակները և նշանակման կանոնները:
90. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները:
91. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի իրավական հիմքերը:
92. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի մասնակիցները:
93. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը:
94. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշում ընդունելը, այն բողոքարկելը և կատարելը:
95. Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի առանձնահատկությունները և իրավական հիմքերը:
96. Կարգապահական խախտման (զանցանքի) հասկացությունը:
97. Կարգապահական տույժի հասկացությունը և տեսակները:
98. Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի իրավական հիմքերը:
99. Տնտեսության պետական կառավարումը:
100. Ֆինանսներ պետական կառավարումը:
101. Գյուղատնտեսության պետական կառավարումը:
102. Տրանսպորտի և կապի պետական կառավարումը:
103. Քաղաքաշինության պետական կառավարումը:
104. Պետական գույքի պետական կառավարումը:
105. Բնապահպանության պետական կառավարումը:
106. Կրթության պետական կառավարումը:
107. Գիտության պետական կառավարումը:
108. Մշակույթի պետական կառավարումը:
109. Սպորտի և երիտասարդության պետական կառավարումը:
110. Սոցիալական ապահովության պետական կառավարումը:
111. Առողջապահության պետական կառավարումը:
112. Պաշտպանության պետական կառավարումը:
113. Ազգային անվտանգության պետական կառավարումը:
114. Ոստիկանության պետական կառավարումը:
115. Արդարադատության պետական կառավարումը:
116. Արտաքին գործերի պետական կառավարումը:
117. Սփյուռքի գործերով պետական կառավարումը:
118. Հանրային ծառայությունների պետական կառավարումը:
119. Տնտեսական մրցակցության պետական կառավարումը:
120. Անշարժ գույքի կադաստրի պետական կառավարումը:
121. Ազգային վիճակագրության պետական կառավարումը:
122. Պետական եկամուտների կառավարումը:
123. Տարածքային պետական կառավարումը:
124. Վարչական իրավունքի ծագման ու ձևավորման պատմաիրավական նախադրյալները:
125. Արտասահմանյան երկրների վարչական իրավունքի հիմնական համակարգերը: